ՔԱՂՎԱԾՔ

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝
2022 թվականի հոկտեմբերի 31-ի, ժամը 14:00-ի նիստի
N 3 արձանագրությունից

ԼՍԵՑԻՆ.- Պրոֆեսորի գիտական կոչում հայցելու նպատակով գիտական խորհրդի փակ գաղտնի քվեարկությանը մասնակցելու համար **Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի կառավարման ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության թեկնածու Խորեն Ալբերտի Մխիթարյանի** ռեկտորին ուղղված դիմումի մասին հարցը:

Զեկուցող՝ գիտական խորհրդին կից մրցութային հանձնաժողովի նախագահ, հասարակագիտության ամբիոնի պրոֆեսոր, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, «ՀՊՏՀ ամբիոնի պատվավոր վարիչ» **Ա.Հ.Սարգսյան**:

Զեկուցողը նշեց. Խ.Ա.Մխիթարյանը 1993 թվականի սեպտեմբերի 1-ից առ այսօր աշխատում է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի կառավարման ամբիոնում. 01.09.1993 – 24.04.1997՝ ասիստենտ, 1997 թվականի ապրիլի 25-ից՝ դոցենտ (03.09.2012 – 31.08.20115՝ համատեղությամբ դոցենտ (0,5 դրույք), 01.09.2015 – 01.07.2019՝ համատեղությամբ դոցենտ (0,25 դրույք)): Վերջին 5 ուսումնական տարվա ընթացքում անընդմեջ իրականացրել է հայցվող գիտական կոչման մասնագիտությանը համապատասխան գիտամանկավարժական գործունեություն:

Խ.Ա.Մխիթարյանը գիտամանկավարժական աշխատանքին զուգահեռ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում զբաղեցրել է նաև վարչական պաշտոններ. 03.09.2012 – 14.09.2016՝ գիտության բաժնի պետ, 15.09.2019 – 12.05.2019՝ գիտության և ասպիրանտուրայի բաժնի պետ, 13.05.2019 – 26.08.2020, գիտահետազոտական աշխատանքների կազմակերպման բաժնի պետ, 02.09.2018 – 26.08.2020՝ լրացուցիչ կատարել է կառավարման ամբիոնի վարիչի գործառույթները, 27.08.2020 – 22.03.2022՝ կառավարման ամբիոնի վարիչի ժամանակավոր

պաշտոնակատար: Նշվեց նաև, որ Խ.Ա.Մխիթարյանը 07.07.2014 – 01.09.2019 լրացուցիչ կատարել «Բանբեր ՀՊՏՀ» գիտական հանդեսի խմբագրի տեղակալի գործառույթները:

Խ.Ա.Մխիթարյանը ծնվել է 1966 թվականի հոկտեմբերի 14-ին քաղաք Երևանում՝ ծառայողի ընտանիքում: 1983 թվականին ավարտելով Ե.Չարենցի անվան միջնակարգ դպրոցը, ընդունվել է Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտի (ԵրԺՏԻ, ներկայում՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան, ՀՊՏՀ) աշխատանքի էկոնոմիկայի և կազմակերպման ֆակուլտետի «Աշխատանքի էկոնոմիկա» մասնագիտության առաջին կուրս, որն ավարտել է 1989 թվականին: 1985-1987 թթ. ծառայել է Խորհրդային բանակում: Ինստիտուտն ավարտելուց հետո՝ 1989-1993 թթ. աշխատել է Երևանի կաբելի գործարանի աշխատանքի և աշխատավարձի կազմակերպման բաժնում որպես տնտեսագետ: 1990-1992 թթ. ձևակերպվել է հայցորդ ԵրԺՏԻ-ի աշխատանքի էկոնոմիկայի և սոցիոլոգիայի ամբիոնում: 1993 թվականի սեպտեմբերի 1-ից ընդունվել է աշխատանքի ԵրԺՏԻ-ի կառավարման ամբիոնում որպես ասիստենտ, միաժամանակ աշխատելով Հայէկոնոմբանկի («Ժիլսոցբանկի») Մյասնիկյանի մասնաճյուղի վարկային բաժնում: Խ.Ա.Մխիթարյանը աշխատում է նաև Երևանի «Գլաձոր» համալսարանի ընդհանուր տնտեսագիտության ամբիոնում. 1996-1997 թթ՝ դոցենտ, 1997 թվականից առ այսօր՝ ամբիոնի վարիչ: 2015 թվականի նոյեմբերին երիտասարդ սերնդի մասնագիտական կրթության գործում ներդրած նշանակալի ավանդի կապակցությամբ Խ.Ա.Մխիթարյանը պարգևատրվել է ՀՀ վարչապետի շնորհակալագրով և Երևանի «Գլաձոր» համալսարանի հուշամեդալով: Քանի որ ազատ տիրապետում է անգլերենին, ժամանակ առ ժամանակ դասավանդել է նաև միջազգային մի շարք բուհերում որպես «այցելող պրոֆեսոր» (visiting professor):

Ամուսնացած է, ունի 2 զավակ: Անկուսակցական է:

Խ.Ա.Մխիթարյանը 1996 թվականին պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն և ՀՀ ԲՈԿ-ի կողմից նրան շնորհվել է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան: 2002 թվականին ՀՀ ԲՈԿ-ի կողմից նրան շնորհվել է դոցենտի գիտական կոչում:

Խ.Ա.Մխիթարյանն ունի տվյալ բնագավառի ինչպես գիտական, այնպես էլ ուսումնամեթոդական աշխատանքներ, որոնց ընդհանուր թիվը 48 է, այդ թվում՝ վերջին 5 տարվա ընթացքում՝ 8 աշխատանք (2 կոլեկտիվ մենագրություն, որից 1-ը՝ «Ամբերդ» մատենաշար, 3 ուսումնական ձեռնարկ, որից 1-ը՝ համահեղինակությամբ, 4 դասագիրք՝ համահեղինակությամբ, որից 3-ը «Մենեջմենթ» դասագիրքն է՝ հրատարակված տարբեր տարիներին, 1 գործարար խաղի կազմակերպման ուղեցույց՝ համահեղինակությամբ, 32 գիտական հոդված՝ տպագրված ՀՀ գիտական ամսագրերում, որից 8-ը՝ համահեղինակությամբ, 6 գիտական հոդված՝ տպագրված միջազգային գիտական ամսագրերում):

Խ.Ա.Մխիթարյանի գիտական ղեկավարությամբ պաշտպանվել և ՀՀ ԲՈԿ-ի կողմից հաստատվել է 6 թեկնածուական ատենախոսություն: Նա սկզբունքային, բանիմաց գիտնական մանկավարժ է, ունի մասնագիտական պատրաստվածության բարձր մակարդակ, պարտականությունների նկատմամբ պատասխանատվության մեծ զգացում, մարդկային բարձր արժանիքներ: Խ.Ա.Մխիթարյանը մշտապես աշխատում է իր գիտելիքների խորացման ուղղությամբ՝ գիտական գործունեության արդյունքները հասանելի դարձնելով ուսանողներին և ասպիրանտներին: Իր կատարած դրական և արդյունավետ աշխատանքի շնորհիվ վայելում է գործընկերների և ուսանողների հարգանքը:

Կառավարման ամբիոնը միաձայն (կողմ՝ 26, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0) և գիտական խորհրդին կից մրցութային հանձնաժողովը (կողմ՝ 6, դեմ՝ 2, ձեռնպահ՝ 0) երաշխավորել են Խ.Ա.Մխիթարյանին՝ մասնակցելու գիտական խորհրդի փակ գաղտնի քվեարկությանը պրոֆեսորի գիտական կոչում հայցելու նպատակով:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.-

Պրոֆեսորներ Դ.Ռ.Գալոյանը, Թ.Մ.Մկրտչյանը, Մ.Ս.Մեքումյանը, դոցենտներ Ա.Վ.Գրիգորյանը, Պ.Ա.Քալանթարյանը, Վ.Կ.Աթոյանը:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ գիտական խորհուրդը որոշեց Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի կառավարման ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության թեկնածու Խորեն Ալբերտի Մխիթարյանի թեկնածությունը դնել գիտական խորհրդի փակ գաղտնի

քվեարկությանը՝ պրոֆեսորի գիտական կոչում հայցելու նպատակով (որոշումն ընդունվեց բաց քվեարկությամբ. կողմ՝ 53, դեմ՝ 2, ձեռնպահ՝ 0):

Քվեարկության արդյունքներն են. գիտական խորհրդի 60 անդամից նիստին և քվեարկությանը մասնակցել են 55-ը: Փակ գաղտնի քվեարկության արդյունքներն են. կողմ՝ 53, դեմ՝ 2, անվավեր քվեաթերթիկ՝ 0:

ՈՐՈՇԵՑԻՆ.-

1. Հաշվի առնելով, որ **Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի կառավարման ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության թեկնածու Խորեն Ալբերտի Մխիթարյանի** կատարած գիտամանկավարժական աշխատանքը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի հուլիսի 9-ի N 615 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու կարգի» (խմբ. 17.02.2022 թ. N 177 - Ն) 3-րդ գլխի 6-րդ կետի 2-րդ ենթակետի ա. պարբերության պահանջներին՝ **Խորեն Ալբերտի Մխիթարյանին** շնորհել **պրոֆեսորի** գիտական կոչում **«Տնտեսագիտություն»** բնագավառի **Ը.00.02՝ «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում»** մասնագիտությամբ:

2. **Միջնորդել բարձրագույն կրթության և գիտության կոմիտեին՝ հաստատելու համալսարանի գիտական խորհրդի որոշումը:**

Գիտական խորհրդի նախագահ՝ **Դ. Ռ. Գալոյան**

Գիտական խորհրդի քարտուղար՝ **Ն. Հ. Դարբինյան**

2023 թ. հոկտեմբերի 31
Երևան